Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn
V S94

1999

Ц. гр.

Приватарите чиновници
пенсия фонд

Ц. Мирчев,
чин. мин. на вътрешните работи

1861

ՉՐՊԱՐՏՈՒԹԻՒՆ Օ Ի

ՉՐՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՊԱՏԳԱՄԱՒ

Մարդ մը՝ որ 20 տարիէ 'ի վեր ազգային յառաջադիմութեան անհաշտ թշնամին եղած է. մարդ մը՝ որ ամէն նոր ուղղանգի, ամէն իմացականութեան, ամէն կարողութեան դէմ անողքելի ոխակալութեան տեսարանը բացած է Ազգին առջեւ. մարդ մը՝ ուրուն համար ամէն մտածութիւն հերետիկոսութիւն է, ամէն կարծիք մէկ մէկ աղանդ, ամէն դաղափար անհաւատութիւն և ամենայն յառաջադիմութիւն յեղափոխութիւն. մարդ մը՝ որ Ֆէդիէի անունը իր վրայ կրելը իրեն փառք ու պարծանք կը համարի. մարդ մը՝ որ երբեմն Վօլթէրական անհաւատ, ապահ՝ մը Բողոքական աղանդաւոր, ու դրեթէ միշտ անդրալեռնական Գաթոլիք եղած է, առանց երբէք Լուսաւորչական Հայ ըլլալու, ինքթերցողք մեկէն հարկցան թէ Պրու-

ZUUP
45-94-ao
2ß 596

սացի Յովհաննէս Պատուելին ըսել կ՚ուզենք, — այս մարդը՝ որ մէկ քանի տարիներէ ի վեր բոլոր Ազգին երեսէն ինկած լքեալ մեկ առանցնութեան մը մէջ իր աղմկայոյզ կենաց քաւութիւնը կը տանէր և որուն ձեռքէն Սահմանադրութիւնը բռնեց Ընդհանուր Ժողովոյ գահն ամբարձուց իր ազգայնութեան ու ազգային մատենագրի կրկին իրաւունքը արբանցնելով. այս մարդը մէկ քանի ամիսէ՝ ի վեր բանիւ, գրով ու գործքով Սահմանադրութեան դէմ խարդաւանելէն ետեւ, հիմայ ալ ելեր անիծից — արմատ յայտարարութեամբ մը՝ բոլոր Լուսաւորեալ կողմը զրպարտելու, վատահամբաւելու և անուանարկ ընելու փորձ փորձեր է։

Պատուելին որ Գաղղիայի յեղափոխութիւնը Հայոց Լուսիքէի պատմութեանը մէջ կարդացած է և որ իր քաղաքական կարծիքները Վէջեթոյի յոդուածներէն կը քաղէ, Ռոպէսպիէռը իբր մարդակեր ճիւաղ մը ներկայացնելէն ետեւ, որ հարիւր տասնեւչորս օրվան մէջ մէկ քանի հարիւր հազար մարդս սրիւն թափեր է եղեր (՝), Լու-

սաւորեալ անուանով Ճանչցուած Հայ Ազգին ողջամիտ մասը բոլոր Ռօպէս-բիէռի աշկերտ ու կապիկ ձեւացնել կ'ուզէ և ամեն մէկս մէկմէկ արենարբու դաղան կ'ընէ։

Չէինք կարծեր որ Պրուսացին լըբբուԹիւնը մինչեւ այս աստիճան կը հասցուներ։ Ի՞նչ, Իգնատիոս Լոյոլային այդ յեռամեայ աշկերտը, Թորքոմատային և Տիւքա՛Ալպին անդրաշխարհեան փոքրաւորը, սրբաքնեւԹեան ատրուշանին երկրպագուն, Ս. ԲարԹողիմեան դահիճներուն հագնեցուն. ի՞նչ, այդ մարդն է, որ յանուն ամենամեծ փառացն Աստուծոյ և իր կողմին ամենասիրբը շահուն համար Թափված բոլոր արիւնը կը սրբացնէ ու օրհնած ջուրի պէս ժողովուրդին դլուխը կը սրսկէ ի .քաւուԹիւն մեղաց, այդ մարդն է որ կը համարձակի ասանկ զրպարտուԹիւն մ՚ընել Ազգին Լուսաւորեալ մասին համար։ Հերետիկոս, Բողոքական, անհաւատ, յեղափոխական, ապրստամբ ըսելնիդ .քիչ եկաւ ու հիմայ մարդասպան անուն մ՚ալ հանեցիք վրանիս։

ԱՀ, Պատուելի, ինչ մուր ալքսեսմեր վերայ, սա մարդասպանութեան կեղտը քեզի և քուկիններուդ կը վայել և ոչ թէ մեզի։ Զեզի, որովհետեւ ձեր նպատակին հասնելու համար ամէն տեսակ միջոց գործածելու արտօնութիւն ունիք Բէլիարէն [1]). Ձեզի, որովհետեւ յայտնի խօսքերով հրաման ունիք խաբէութիւն, գողութիւն, մատնութիւն, մարդասպանութիւն ընելու [2]). Ձեզի որովհետեւ այս հրամաններուն կուրբաբար հնազանդելով՝ ոչ թէ հարիւր հազար, այլ միլիօններով մարդոց արիւն թափեցիք Եւրոպայի մէջ, — միայն փայտակոյտի վերայ երկու միլիօն մարդ երած էք դուք՝ անզգամներ [3])—. Ձեզի, որ մեր մէջ ալ՝ օրէնիս բանտ, օրէնիս աքսոր ղրկել տալու համար ամէն տեսակ ղըրպարտութիւն ու մատնութիւն ըրիք. Ձեզի՝ որ դեռ ասդիս անդին ականջ կը

---

1) "Նպատակն ՄԻՋՈՑԸ Ի՝ԱՐԴԱՐԱՑԸՆԴ"։ Ժիզվիթներուն յատուկ ոգեղէնական սկզբունքն է։

2) Ժիզվիթներուն Ընկերութեան կանոնադրութեանցը մէջ բառ առ բառ կան սուտնք։

3) Տես Ճառ ասացեալ ՅԱՂԹԱՅԻՆ Ժողովարանն Ի Բարիզ Ուսուցանելու ազատութեան վերայ 15 յունվար 1850, Վիքթոր — Հիւկօ։

լեցնէք՝ թէ Ազգը խաղաղելու համար պէտք է մէկ քանի մարդու քիթ արիւնել։

Իսկ մենք ոչ ղէք զրպարտեցինք, ոչ ղէք հալածեցինք, ոչ ղէք մատնեցինք և ոչ մէկուն կարծեացը վերայ բռնացանք։ Եթէ կարծեաց ազատութիւնը ջը յարգէինք, ի՞նչ կը կարծէք, Մեղուն ու Միւնատին գոցվելէն ետու քու խայտառակ Երեւակդ ու նա միւս առ-կոց-առակ խայտառակը կրնայի՞ն ողջ մնալ։ Եւ եթէ մեր նպատակին հասնելու համար ձեզի պէս ամեն տեսակ միջոց գործածել յանձնառու ըլլայինք, մեր Զաբթիէն իջնալուն հետեւեալ օրը դուք ալ Իբլիսխանան երթալու էիք։ Որերնուդ պատիւը, որերնուդ շահը ղսհել ուզեցինք երբէք մեր կրքին, և զոմ ձենէ վախցուցինք կամ վախցնելու փորձ փորձեցինք իժի և քարքի լեզուներդ բերանուդ մէջ գամելու համար, ու ձեռքերնիդ ոտքերնիդ կապած հրապարակին վերայ նետելու համար որ անցնող դարձող վրանիդ կոխելով անցնի։

Պատասխան տուր տար, Պատուելի, ապա թէ ոչ այդ ձրի նախատինքներու

վրդ. քու. ինչ ցած ու ապականեալ բը-
նութեան տեր բրլագ կը յայտնես։

Բայց կեցիր, եղած մը կայ, անի-
կայ պատմեմ. միայն թէ փոխանակ ես
ամէնալու, գուն պիտի ամէնաս եաքը։

Մէջերնուս մէկ քանի հոգի տես-
նելով իրենց խոստովանահայր քահա-
նայները, որ քուներնին ծախեր, ժա-
մերնին մատցեր, պատարագը սեղանին
վրայ թողուցեր և եղբայր եղբօր դէմ,
այր ու կնոջ մէջ, հայրն ու որդին ի-
րարու հետ, անհաշտ ատելութեան
գրգռելու ելեր են, և իրենց խոստո-
վանորդիներուն տուները պտըտելով
խռովութեան հրդեհի լուցկիքներն կը
ձգեն ամեն տեղ։ Տեսնելով որ այդ
անուշնով միայն քահանայները խաղա-
ղութեան հրեշտակ ըլլալու տեղ՝ կող-
մնակցութեան մը զինուորներն եղած
են, տեսնելով որ Կրօնքը և Եկեղեցւոյ
սուրբ աւանդութիւնները նենգելով,
խարդաւանելով և ուզածնուն պէս
փոխփոխելով՝ գործիք ու խաղալիկ ը-
րեր են իրենց ձեռքը. մէջերնուն մէկն
ալ Ազգին Պատրիարքին, Եպիսկոպոս-
ներուն, Վարդապետներուն, Քահա-

նայներուն, բոլոր Ամիրայներուն, Էֆ-
նաֆներուն, ուսուցմունքներուն և
իր ալ շինած ու ստորագրած Սահման-
նագրութեան մէջ աղբելու եղեր է,
ինչպէս որ Եւրոպը իր ստորագրութեամբ
ալ խոստովանեցաւ անանկ ըլլալը,
բարեպաշտ մարդիկ չըկրնալով հան-
դուրժել այսքան գայթակղութեան,
մերժեր հեստեր են իրենց տունէն
այն անարժան քահանայները. միւսներ-
ըն ալ այս առիթով յարգը ցորենէն
զատելու համար յայտարարութիւն
են ըրեր. քահանայները կանչեր հար-
ցուցեր են և ուզեր են իմանալ թէ
իրենց յ'աջ և յ'ահեակ տուած ստո-
րագրութիւնները, որ այնքան գայ-
թակղութեան պատճառ եղան, չարա-
մտութեամբ ու գիտնալով եղած է,
թէ տկարութեամբ ու չըգիտնալով:
Եւ աղէկ են ըրեր: Զի ասանկով ահա
հասկցվեցաւ որ մէջերնուն խիստ շատը
տկարութիւններնուն համար ստորա-
գրեր են, մինչև անգամ դու ալ, Պատ-
ուելի, պարտաւորեցար խոստովանե-
լու յայտարարութեանդ մէջ՝ թէ տը-
կարները շատ են. ըսել է որ՝ ով որ

աւելի վախցնելու ըլլայ զիրենք, անի աւելի ստորագրութիւն կառնէ ա-ստնցմէ. ըսել է որ Պատրիարքին ձեռ-քը տրված ստորագրութիւններուն չա-տը, մեծ մասը. — անանկ չէ՞, Պատ-ուելի, քու վկայութեամբդ կը խօսինք կոր, — վախնալնուն տուած են իրենց ստորագրութիւնները, վասն զի եկե-ղեցականէն վախցողը աւելի և Պատ-րիարքէն կը վախնայ, Պատրիարքէն, Ե-պիսկոպոսէն ու քեզի պէս ասասուածա-բանէն, որ անանկ "ձեզ կարգաւոր չենք ճանչնար" ըսելով չար խօսքով չէք անցնիր, այլ գործքով ալ, փիլօնին կառնէք, մօրուքնին կ'ածիլէք, իրենց անբռնաբարելի սուրբ կարգէն կը մերկացնէք ու ԷՐԷՖ ՍԱՀՄԱՆՈՒԹԻՒՆ հանդիսանէ՝ անհաւատ կամ բողոքականի վճիռ մը՝ ալ կը հանէք վրանին։ Ասոր դու ալ չէ՞ չես կրնար ըսել։ Է՛յ հիմայ այս վախով տրուած ու վախով առնուած ստորագրութիւնները քանիի՞ կառնես, որ չ'ամչնալով այդ ստորագրութիւն-ներով տրուած վճիռը ադգին կամքէն, անցեալ և ապագայ Պատրիարքներէն, Սահմանադրութենէն աւելի հաստատ

է կ'ըսես, անանկ որ ամենը կը հալին այդ ստորագրութիւնները չեն հալիր։ Ահ, ի՞նչ կ'ըլլար, Պատուելի, յիշողութիւնդ այդքան խճողելուդ տեղ՝ քիչ մը դատողութիւնդ կրթէիր ու ատանկ երախայի տրամաբանութիւններով դըպրոցէն ելլող տղոց ծաղը ու ծանակ չըլլայիր։ Մենք քու ըսածդ երեկվընէ ընդունած ենք։ Այո՛, քահանայներուն մէջ արիասիրտը քիչ է, տկարը շատ է, կը վախնան՝ ու վախերնուն ի՞նչ ստորագրութիւն ուզես կուտան։ Անոր համար է որ մենք գաղտնի քուէարկութիւնը կը պաշտպանենք նոյն իսկ քահանայներուն համար, որպէս զի՝ իրենց տղատ կարծիքն հասկցուի. և անոր համար է որ դուք գաղտնի քըուէարկութիւնը չէք ընդունիր, որպէս զի անոնց կարծիքին վրայ բռնանաք, անիրաւներ։ Թող քաղտնի քուէարկութիւն ընեն քահանայները, այն ատեն իրենցմէ յետոյ կոչում՝ ուզող չըլլար. բայց քանի որ յայտնի ստորագրութիւն դնեն, ձեր գործածած միջոցները մենք ալ գործածելով յետոյ կոչում՝ պիտի ուզենք որ իրենց տկարութիւնն իմացվելով՝ տուած վճիռնին

աշ որչափ տկար և անզօր բան ըլլալը հասկցվի։ Ակէ եւրը ուղածնուդ չափ վճիռ հանել տուէք։ Մենք մեր նպաստակին հասանք։ Քա՛ջ է։

Գանք քու միւս զրպարտութեանցդ։

Ազգին ողջամիտ մասը ներկայ իրողութիւնը, որ միշտ աճելու վրայ է, վերցնելու կերպը մտածելով, ուրիշ ճար չը գտաւ, բայց եթէ նախ և առաջ չարեաց գլխաւոր պատճառը վերցնել։ Ո՞վ էր խնդիրը մինչև այս վիճակը հասցնողը, ո՞վ էր, ուրիշներէ աւելի հեռազհեռակ տարբեր բերան բանեցնողը, իրարու հակառակ ստորագրութիւններ դնողը. — Կոստանդնուպոլսոյ Պատրիարքը։ Արդ՝ Պատրիարքը ազգին Սահմանադրութեանը դէմ, Տէրութեան հրամաններուն դէմ այնքան յանձանքներ գործելէն ետև, Ազգը բոլոր Տէրութեան առջև ազատելու մատնելու աշխատելէն ետև, կրնա՞ր մի մնալ։ Է՛ն առաջ Պատրիարքը փոխել պէտք էր։ Ուստի երեսուն և վեց ժամու մէջ չորս հազարէն աւելի ստորագրութիւն ժողովեցաւ ամեն թաղերէն իր հրաժարականին

համար, մինչդեռ դուք ամբողջ երկու շաբթման մէջ երկու հազար սատրա-գրութիւն չը կրցիք ժողվել, ձեր ընկերներն, համալներն ու բոլոր-մպաճիներն։ Արդ՝ այս հազարաւոր համոզմամբ և խղճի մասը դրված սատրագրութիւն-ները՝ այժմ Պ. Զամուրճեան խարդախ ցուցնել կ'ուզէ։ Սատրագրողներուն մէկ մասը դպրատան տղայք են կ'ըսէ, մէկ մասը բոզաբական Հայեր և որ աւելի մեծն է, աւելի մեծ լրբութեամբ կը համարձակի ըսել թէ քանի մը հարիւր հոգի քանի մը հազար սատրագրութիւն գրել են, ինչ կերպով — մէկ հոգին ութը տասը թեղ գրոյն ձեռը փոխելով ու ճանրացնելով։ Պարոն Տէրոյենց ազգին Լուսաւորեալ մասին վրայ այս խարդախութեան աղտն ալ քսելով, կը տնի ցուցնել թէ այն աղերսագիրը կեղծ է, խարդախ է. և այն մէկ քանի հարիւր հոգին իրենց պաշտպան Տէրութիւնը խաբեր են։

Դուրս ելլ, անօրէն զրպարտիչ, փոխանակ օձի պէս չոր տերևներուն ներքև սողալու եկու ըսածդ ապացուցէ։ Գտիր քսան և մէկ տարեկանէն

ՀԱՅԿԱԶՆ ԳՐԱԴԱՐԱՆ

վար մէկին ստորագրութիւնը, գտիր մէկ հատ կեղծ գիր մը, գտիր բողոքական հայու մը ստորագրութիւնը ցոյց տուր բոլոր ասոնք, — եթէ ոչ վատ ես, զրպարտիչ ես, ստախօս ես։ •

. . . . . .

Բոլոր աղգը, որոնց մէջ նաև մեր Քաթոլիկ ու Բրոթէսթանթ եղբայրները իբրև մի արիւն և մի աղգ, արտասուալից աչքը կը նային ներկայ աղգային եղերելութեանց վրայ։ Բայց աղգով մէկ այլ կրօնքով ու վարչութեամբ տարբեր ըլլալնուն՝ ոչ մենք 'ի ստորագրութիւն կը հրաւիրենք զանոնք և ոչ անոնք յանձն կ'առնեն խօսելէ զատ ուրիշ կերպով խնդրոյն մէջ ձեռնամուխ ըլլալ։

Օգոստոս 21 ին ժողովին մէջ իրենց ընտրած երեսփոխաններուն պատիւը պաշտպանելու, և անիրաւութեան դէմ բողոք բառնալու համար Պատրիարքարան իջնող բազմութեան մեծ մասը պատանի էին, ինչպէս դուալ կը խոստովանիս, դպրոցի տղաք չէին։ Եթէ դպրոցի տղաք ըլլային. քեզի պէս երկու վարժապետ մէկ ձայն մը

հանելով կրնայիք ցրուել և դու ալ տեսար թէ գիւրաւ չի ցրուեցան։

Գիտէս որոնք էին այն անձերը որ 'ի զուր կ'աշխատէին ազգին Պատրիարքը ամբնջնել իր ըրածները երեսին տալով, անի այն երիտասարդութիւնն էր որ չորս հինգ տարի է քեզ ու քեզի պէսերը անհանգիստ կ'ընէ, այն անձինքն էին որոնց դատարակութիւնը կիսկատար ձգելու համար ամեն ջանք ըրիք տասը տարի առաջ, և անոնց պաշտպաններուն վրայ ամեն աղա ու մուրբ բսեցիք։ Զեզի ապիտութիւն պէտք է ձեր նպատակին հասնելու համար, լսածէն կը վախնամ դուք իբրև գողք գիշերաւսէրք։ Դպրատան տղայքը Ժողովարանը չ'էին այն օրը, ու թէ որ չը գիտնալ կը ձևացնես, ես ըսեմ քեզի։ Այդ քու ըսած տղաքդ մօտ տեղերը քու քահանայ արբանեակներդ փէր ողորմի կեցուցեր էին, ռամիկին միտքը յափշտակելու համար, այն տղաքը Սուրբ սեղանին առջև բազկատարած զդատուութիւն կը հայցէին իբրև անառակ այն անձերուն համար, որոնք ազգին իրաւունքը բնառելու եկած էին 'ի Ժողովարան։

Ազգին իրաւունքը այդ ուսող ուրացողը գիտէ՞ մի ի՞նչ բան է. և միթէ ամենայն իրաւունք և ամենայն արդարութիւն արդէն ամեն օր ասից ի խիստ եղած չէ՞ մի տեսակ մը մարդոց որ, ինչպէս Լուդովիկոս 14ը կ'ըսէր Ֆրանսայի տէրութեան համար ասոնք ալ մեր ազգին համար կը կարծեն թէ ազգն իրենք են։

Պարոն Զամուռճեան որ այդ տեսակ մարդոց դէմ երբեմն բացված պատերազմին մէջ. իր անհաւատութեան ատենը ինք ալ ջահակիր զինուոր եղած է, հիմայ չ'ամչնալով և եղերութենէն առաջ վազելով անծածկայթ և լրբենի ուրախութեամբ Սահմանադրութիւնը անցեալին մէջ կ'ընկրկէ ու իբրև անցած բանի մը պէս կը խօսի վրան հին Սահմանադրութիւն ըսելով։ Պարոն Զամուռճեան թող ազէկ դիտցած ըլլայ թէ ազգին մէջ ո՛չ ոք իրաւունք ունի Սահմանադրութեան գոյութիւնը ուրանալու, զի ազգը բոլոր ընդունած է զանի։ Միայն թէ առաջուց 'ի վեր ազգին սպարապետը Տէրութեան քննութեանը ու վարչայ-

մանը ներկայացնել զայն, և եթէ մինչ-
չեւ հիմայ ատիկայ չէ եղած՝ պատ-
ճառը Լուսաւորեալները չեն, հապա
անոնք են որ սատրագրեցին թէպէտ,
բայց դեռ չ'սատրագրած մարդերնին դը-
րած էին աւրել զ'անոնք. անոնք էին որ
արգելք եղան Տէրութեան ներկայա-
ցընելու։

Իսկ այսօր որ Տէրութեան գացին
այն անձինքը Սահմանադրութիւնը զըր-
պարտեցին իբրեւ յեղափոխական մե-
քենայ մը, Պարոն Զամուռճեան թող
աղէկ գիտնայ որ Տէրութիւնը այդ զըր-
պարտութեան ականջ չը պիտի կախէ։
Տէրութիւնը պիտի քննէ ու պիտի տես-
նէ թէ ո՞ր կողմինն է իրաւունքը և օ-
րինաւոր կերպով վաւերացնելէն ետեւ,
իբրեւ անխախտելի օրէնք՝ անոր գործ-
ադրութիւնը պիտի պահանջէ։ "Ազգը
մեք եմք" ըսող մարդիկը Տէրութեան
առջեւ Ազգին հետ հակակշիռ չեն գար։
Այդ մարդիկն ու իրենց գաղափարները
են որ հինցեր ժանգոտեր են։ Անոնք
կ'անցնին կ'երթան, իրաւունքն ու Սահ-
մանադրութիւնը կը մնան։ Այս ներկայ
խառնիչ Թիւնն ալ կը վերջանայ, կամ ի ը

կը դադրի և անոնք որ առանց դիտնալու խաժամուժ ամբոխին մէջ գտնուէր Աղգին և Սահմանադրութեան դէմ կը շարժին այսօր, անոնցմէ շատերը պիտի դան միանան մեզի հետ Տէրութիւնը վաւերացնելէն ետեւ Սահմանադրութիւնը գործադրելու համար, և մենք ուրեալ անոնք պիտի անիծեն Զեզ, Զամուրճեան, Սէթեան և Փափազեան և բոլոր արքանեակներդ, զոնք որ ամեն աղէկ բանի արգելք եղած էք, զուք որ միշտ ամեն խառնուածեանց գլխաւոր շարժառիթն եղած էք որերդիդ յայտնի, որերդիդ գաղտնի։

Մ. Վ.

9 Սեպտեմբեր 1861.

377.